

† ԱՐՄԷՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՅՏԸՆԵԱՆ

Յուլիսի 8-ին, գիշերը, վախճանուեց Վիեննայի Մխիթարեանների արքահայր, հռչակաւոր հայ գիտնական Արսէն արքեպիսկոպոս Այտրնեանը, մօտ եօթանասուն և ութ ամեայ տա՝ րիբում: Իբրեւ տաղանդաւոր գիտնական, իբրեւ բարի մարդ և պատկառանք ազդող հոգեւորական՝ հանգուցեալը առանձին յարգանք էր վայելում թէ եւրոպական գիտութեան ներկայացուցիչներին և թէ բարձրաստիճան անձերի շրջանում: Երկար ժրանց-Յովսէփ կայսրը, Հռոմի պապը, Աւստրիայի առաջին մինիստր Կեօրէրը, Վիեննայի քաղաքագլուխ Լիզզերը և այլ նշանաւոր մարդիկ առանձին համակրանք և յարգանք էին ցոյց տալիս հայր Այտրնեանին, ուստի նրա մահուան բօթը լսելով՝ շտապելին խոր ցաւակցութիւն յայտնել: Իսկ հայ ազգը վաղուց ի վեր սովոր է ըստ արժանւոյն պարծանքով յիշել Արսէն Այտրնեանի սիրելի անունը:

Հայր Այտրնեանի ամենագլխաւոր գործը, որ անմահացրեց նրա անունը, անշուշտ, նրա հռչակաւոր հետազօտութիւնն է, «Արդի հայերէնի» ծագման, էութեան, պատմութեան ու ներկայ վիճակի մասին: 1866 թուականին լոյս տեսած նրա այդ «Բնական քերականութիւնը» մի յեղափոխիչ նորութիւն էր հայ լեզուի գիտութեան համար: Աւելի քան 800 մանրատառ էջերում Այտրնեանը, եւրոպական գիտութեան մեթոդով և լեզուաբանական խոր փիլիսոփայական հայեացքով դիտեալ, հետազօտում էր մի հարց, որի մասին այդ ժամանակ մեր գրականութեան մէջ սաստիկ բանակուիւ կար, քայքայ երկու վիճող կողմերն էլ հեռու էին խոր գիտական տեսակէտներից: Այտրնեանը առաջինն էր, որ մտցնում էր հայ լեզուագիտութեան մէջ գիտական—էվոլյուցիօնական մեթօդ և հետազօտողի քննա-

կան ոգի: Եւ այդ յեղափոխութիւնը կատարուեմ էր մի վանքում, մի վարդապետի ձեռքով և այնպիսի ժամանակ, երբ Մխիթարեան միաբանութեան անդրանիկ հատուածը, վենետիկի մխիթարեանները, դեռ միամտօրէն հաւատում էին որ Ադամն ու Եւան դրախտի մէջ գրաբար էին խօսում... Այդ քննական ոգին, հետազօտելու գիտական մեթօդը Այտընեանի չնորհիւ դառաւ յետոյ վիէննայի մխիթարեանների բնորոշ գիծը, որով նրանք տարբերուեմ էին վենետիկի հայ գիտնականների միամիտ-բանաստեղծական և հինը իդէալականացնող ուղղութիւնից:

Հայութեան այդ մեծ կորուստի առիթով մեր խմբագրութիւնը հեռագրով յայտնեց իր խոր ցաւակցութիւնը վիէննայի միաբանութեան: